



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ  
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



«15» 07 2019թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000058

Ձեռնարկողը՝

«Ակո-Տուֆ» ՍՊԸ

Գործունեությունը՝

Լուկաշինի տուֆերի հանքավայրի արդյունահանման  
աշխատանքների շրջակա միջավայրի վրա  
ազդեցության գնահատման հաշվեկշիռություն  
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000058

«15» 07 2019թ.

**Լուկաշինի տուֆերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Պատվիրատու՝	<<Ակո-Տուֆ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզի Նոր Ամանոս համայնք

Արագածոտնի մարզի Լուկաշինի տուֆի հանքավայրը գտնվում է Արագած լեռան հարավային հարթավայրային տարածքում Արմավիր քաղաքից 10-12կմ հյուսիս-արևմուտք և 2.8կմ հյուսիս Լուկաշին գյուղից:

Հանքավայրի տարածքի կոորդինատներն են ARM WGS-84 կոորդինատային համակարգով՝

- |                         |                         |
|-------------------------|-------------------------|
| Արևելյան բացահանք՝      | Արևմտյան բացահանք՝      |
| 1. X=4453147 Y=8416285; | 5. X=4453147 Y=8416823; |
| 2. X=4453300 Y=8416285; | 6. X=4453307 Y=8415732  |
| 3. X=4453300 Y=8416551; | 7. X=4453308 Y=8416136; |
| 4. X=4453147 Y=8416556; | 8. X=4453147 Y=8416174: |

Հանքավայրի տարածքի բացարձակ նիշերը տատանվում են 900-ից մինչև 1010մ սահմաններում:

Արագածոտնի մարզի Լուկաշինի տուֆերի հանքավայրի պաշարները հաստատվել են Պաշարների Պետական Հանձնաժողովի (ԴԿ3 СССР)-ի կողմից, 1978 թվականի սեպտեմբերի 20-ին, թիվ 8132 արձանագրությամբ, 1978թ. հունվարի 1-ի դրությամբ, հետևյալ քանակներով և կարգերով /հազ.մ<sup>3</sup>/ A-10082, B-10751, C1 -23279:

Պաշարները հաշվարկվել են որպես երեսապատման քարի՝ 9479-76 ԳՈՍՍ-ի, և պատքարի՝ ԳՈՍՍ 4001-77, իսկ արտադրական թափոնները որպես բետոնի թեթև լցանյութ՝ PCT 85-70 Արմ. ССР:

Տուֆի զանգվածից երեսապատման բլոկների ելքը կազմում է 39.4%, իսկ ուղիղ կտրված պատքարի պիտանի ելքը կազմում է 41%:

Հանքավայրը շահագործվել է 2003թ-ից և ներկայացված ՀԱԿՔ հաշվետվությամբ «Ակո Տուֆ» ՍՊԸ-ն նախատեսում է հանքավայրը շահագործել երկու բացահանքերով՝ նախկինում մասամբ արդյունահանված 4.11հա մակերեսով տարածքը (Արևելյան





բացահանք), և 6.05 հա մակերեսով տարածքը (Արևմտյան բացահանք), որը գտնվում է նշված նախկինում մասամբ արդյունահանված տարածքի արևմտյան մասում: Բացահանքերը միմյանցից գտնվում են 100-150մ հեռավորության վրա:

Ծառայման ժամկետը ընդունված է 50 տարի:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների փոքր ծավալներից, բացահանքի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով:

Նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի պարամետրերն են.

Արևելյան բացահանք՝

- Բացահանքի դաշտի առավելագույն երկարությունը-270մ,
- Բացահանքի դաշտի առավելագույն լայնությունը-154մ,
- Մշակվող տուֆերի հաստաշերտի միջին հզորությունը-5.2մ,
- Բացահանքի առավելագույն խորությունը-7.5մ,
- Բացահանքի օտարման մակերեսը-4.11հա,
- Տուֆերի հաշվեկշռային պաշարները-195.1հազ.մ<sup>3</sup>,
- Տուֆերի կորզվող պաշարները-182.85հազ.մ<sup>3</sup>,
- Մակաբացման ապարների ծավալը-0մ<sup>3</sup>:

Արևմտյան բացահանք՝

- Բացահանքի դաշտի առավելագույն երկարությունը-402մ,
- Բացահանքի դաշտի առավելագույն լայնությունը-182մ,
- Մշակվող տուֆերի հաստաշերտի միջին հզորությունը-11.6մ,
- Բացահանքի առավելագույն խորությունը-13.6մ,
- Բացահանքի օտարման մակերեսը-6.05հա,
- Տուֆերի հաշվեկշռային պաշարները-702.25հազ.մ<sup>3</sup>,
- Տուֆերի կորզվող պաշարները-644.3 հազ.մ<sup>3</sup>,
- Մակաբացման ապարների ծավալը-28700 մ<sup>3</sup>:

Բացահանքերի շահագործման ժամանակ նախագծային կորուստները կկազմեն՝ ըստ լեռնատեխնիկական պայմանների արևելյան բացահանքում կողերում և հատակում՝ 3.34% և 2.18%, արևմտյան բացահանքում՝ 4.67% և 2.83%, շահագործողական կորուստները՝ արևելյան բացահանքում՝ 0.5%, արևմտյան բացահանքում՝ 0.5% և կորուստներ, որոնք մնում են բացող խրամի տակ՝ արևելյան բացահանքում՝ 0.25%, արևմտյան բացահանքում՝ 0.25%:

Հանքարդյունահանման աշխատանքներն իրականացվելու են միաժամանակ երկու բացահանքերի հորիզոնների բացումով: Բացահանքի հարավային մասից անցնող Արմավիր-Գյումրի ավտոճանապարհից դեպի հանքավայր գոյություն ունեցող ասֆալտբետոնե ավտոճանապարհից մուտքային ավտոճանապարհների անցում (հարթեցում) բացման առաջին հորիզոններ՝ Արևմտյան բացահանքում՝ 914.7մ և Արևելյան բացահանքում՝ 911.8մ բարձրության հորիզոններ, որից հետո իրականացվելու է համապատասխանաբար դեպի հաջորդ՝ Արևմտյան բացահանքում՝ 912.6մ-897.9մ և Արևելյան բացահանքում՝ 909.7մ - 905.5մ բարձրության հորիզոններ:

Հորիզոնների բացումն իրականացվելու է գոյություն ունեցող մուտքային ճանապարհից կապիտալ խրամի անցումով, որից հետո կատարվելու է պիոներական խրամի անցում: Հաջորդ հորիզոնները նույնպես նախատեսվում է բացել մուտքային ավտոճանապարհից, կտրող խրամի միջոցով:

Մակաբացման ապարների հզորությունը հասնում է 0.2-0.3մ, ծավալը՝ կազմում է 28700մ<sup>3</sup>: Մակաբացման ապարների 14700մ<sup>3</sup> ծավալը կտեղափոխվի N1 լցակայան բուլդոզերով, իսկ մնացած ծավալը 14000մ<sup>3</sup>-ը ավտոինքնաթափով: N1 լցակայան Արևմտյան բացահանքի արևմտյան մասում է: Արևելյան բացահանքում մակաբացման ապարները բացակայում են:





Հանութային աշխատանքները նախատեսվում է կատարել ընդլայնական միակող, ցածրաստիճանային մշակման համակարգով: Հանութային աշխատանքներն իրականացվելու են CMP – 026 մակնիշի քարհատ մեքենայով:

Ուղիղ կտրվածքի քարերի արդյունահանման ժամանակ առաջացած արտադրական թափոնները՝ աշխատանքային հանքաստիճաններում D3-170.1 բուլդոզերի միջոցով տեղափոխվելու է 5-10մ հեռավորության վրա և կուտակվելու:

Այնուհետև, կուտակված թափոնները 2.5մ<sup>3</sup> շերտի տարողությամբ TO-30 միաշերտի անիվային բարձիչով բարձվելու է 3ՄՆ-130 ավտոինքնաթափը և տեղափոխվելու է հանքավայրից 3 կմ հեռավորության վրա գոյություն ունեցող ՋՏԿ, որպես բետոնի թեթև լցանյութ հետագա վերամշակման համար:

Հանքավայրի շահագործման սկզբնական շրջանում մակաբացման ապարները պահեստավորվելու են բացահանքի սահմաններից դուրս՝ Արևմտյան բացահանքի արևմտյան մասում՝ N1 լցակույտ: Ընդունված է լցակույտաառաջացման բուլդոզերային եղանակը:

N1 լցակույտում տեղավորված մակաբացման ապարների լցակույտի առավելագույն բարձրությունը կկազմի՝ 5.7մ: Զբաղեցրած մակերեսը վերևում կկազմի՝ 3800մ<sup>2</sup>, հիմքի մասում՝ 6300մ<sup>2</sup> մակերես, կողերի թեքման անկյունը 35°:

Շահագործման 40-րդ տարում աստիճանաբար շահագործմանը զուգընթաց արտաքին լցակույտից մակաբացման ապարների 24580մ<sup>3</sup> ծավալը տեղափոխվելու է բացահանքի արդեն արդյունահանված 904.2մ-900.0մ բարձրության հորիզոնների վրա, փովելու է 0.7մ բարձրությամբ և հարթեցվելու է, ստեղծելով ներքին լցակույտաառաջացում:

Օգտակար հանածոյի արդյունահանումից հետո իրականացվելու է խախտված հողերի վերականգնում, որի ժամանակ մակաբացման ապարների մնացած մասը՝ 4120մ<sup>3</sup> ծավալը, կտեղափոխվի 897.9մ բարձրության հորիզոնի վրա և կհարթեցվի:

Հարթեցումը կկատարվի բացահանքերի ողջ մակերեսով՝ 74400մ<sup>2</sup>, արտադրական հրապարակը 250մ<sup>2</sup>, ավտոճանապարհները՝ 3200մ<sup>2</sup>, ինչպես նաև նախկինում տեղադրված լցակույտի մակերեսը՝ 6300մ<sup>2</sup>: Ընդհանուր մակերեսը կլինի՝ 84150մ<sup>2</sup>: Աշխատանքները կիրականացվեն բուլդոզերի օգնությամբ: Նախատեսվում է իրականացնել նաև կենսաբանական ռեկուլտիվացիա: Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն 1851,8 հազ. դրամ:

Քարհանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է կտրման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվելու է ջրցան-լվացող մեքենայով, պայմանագրային հիմունքներով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է B1-BԼԱ-1.1 ջրի ցիստեռնով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Հետևաբար, բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես քարհանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Հանքավայրի հարակից տարածքներում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բացահանքի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն:

Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսված են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ, որոնց իրականացման համար նախատեսված է 150հազ. դրամ:





Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,

- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Մշտադիտարկումների իրականացման համար տարեկան նախատեսվում է ծախսել 30.0հազ. դրամ:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն կանխատեսվում: Օրենսդրությամբ սահմանված կարգով Արագածոտնի մարզի Նոր Ամանոս համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում կատարվել են ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներ և հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները: Առկա է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

### Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները 2018թ. փետրվարի 22-ի ՀՀ կառավարության N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով՝ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ակո-Տուֆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լուկաշինի տուֆերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Ձ. Զուռնայան